# ՏՐՏՈՒՆՋ՝ ՍԷՅԵԱԴԻ

Շատ Հայաստան ձայնելով կեղծուած կար չի մնաց,
Նորա վիրաց վերայ եռ չի դրած ճար չի մնաց.
Նրա վէրաց բժշկելոյն՝ երբէք հնար չի մնաց՝
Գիշեր ցերեկ ողբալով՝ խնձում պատառ չի մնաց։

Մերթ ընդ բարակ ծածկոյս՝ նմա խրատ եւտուղ ջատ,
Նա զայրացեալ ասաց ինձ՝ թէ «խրատներդ է փառ»
Չիմացայ նորա ձեռքից՝ գնամ ու՛մ առնեմ գանգատ,
Վասն զի ազգի համար՝ մի հատ ատար չի մնաց,

Օտար ազինք իմ խորոխ՝ ձայնս լսեալ արթնացան,
Բայց Հայերը ՚ի խոր քուն՝ ընկղմեալ աչք չի բացան.
Սոխները գերեցին՝ նրանից ինքեանք չիմացան,
Հայաստանը չի կրած՝ էլ ա՛նհուզար չի մնաց։

Ընդ թշնամեաց փարուելով՝ անառակ վարք առացաւ.
Քրիստոնէի հեզութեան՝ հակառակ յոյժ խաղացաւ.
Իւր կուսութեան ծածկոյթ՝ ասխաց տալ խոստացաւ,
Նորա միջին համարեա՛՝ անարատ քար չի մնաց։

Ես Սէյեադն եմ ազգասէր՝ ա՛խ ամ ազգը չունի տէր,
Ինչ ազգ որ անտէր լինի՝ ամէն գործն է անկաներ,
Շատ ազինք մեզ հիւր եկեն՝ անկոչ և անհրաւէր,
Բայց միջին խեղճ Հայաստանի՝ մաքուր Տաճար չի մնաց։

---

* Ընթերցողք կը նշմարեն՝ թէ մեզանէ յառաջագոյն է այս ողբերգը. և գուցէ շատերն ալ մեզ հետ կը ցաւին որ Գ. Սէյեադն Աղայ և Հայրենիքը յուսադրական երգերով նուագելէն զինք այսօր յուսահատական տաղաչափութիւններ կը հրատարակէ. Մենք, որ յուսահատութիւնը իբրև թերահաւատութիւն կը ճանաչենք, յորդոր կը կարդանք մեր ծերունի Երգչին, որ ջանայ քաջալերել և խրախուսել ընթերցողները և ո՛չ թէ յուսահատեցնել։

Շատ ուրախ ենք, որ Աթոռոյս Արժ. միաբան Մովսէս վարդապետն Կէօմիւրճեանց մխիթարական պատասխան շարադրած է Գ. Սէյեադի Տրտունջին դէմ, և ահա այս առթիւ խիստ պատեհ կը համարինք՝ թէ Տրտունջը (որ տպագրուած էր Մեղուայի մէջ) և թէ իւր յուսադրական պատասխանը միասին դէմ յանդիման հրատարակել Օրագրիս մէջ։ Ուրիշ անգամ դարձեալ ասած ենք՝ որ ո՛չ թէ տրտունջն ու ողբը և ո՛չ թէ անգործ յոյսն ու մխիթարութիւնը, այլ յուսով գործելն է գովելի։ Յուսանք ուրեմն և գործենք։

digitised by A.R.A.R.@